1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՂՈՒՄԱՐՏԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հայտնի է, որ օսմանյան պետությունը, կնքելով խաղաղության, հաշտության պայմանագրեր ու զինադադարներ հարեան պետությունների հետ, դրեթե միշտ անհավատարիմ է մնացել դրանց։ Դաշնազանցությունը հատուկ է եղել բոլոր սուլթաններին, զորավարներին ու դիվանագետներին։ Այդ իրողությունը ակնհայտ դարձավ նաև 1918 թ., երբ Թուրքիան «խաղաղության» բանակցություններ սկսեց Հայաստանի հետ։

Սուլթանի ներկայացուցիչ, նախկինում մեծ վեզիր Հակկը փաշան «փայլեց շաղակրատանքի իր գոհարներով»։ Բրեստում նա հայտարարեց. «Մենք այստեղ անում ենք պատմական գործ, մենք աշխատում ենք արդարության սկզբունքների իրականացման համար։ Այստեղ չկան ո՞չ հաղթողներ, ո՞չ պարտվողներ։ Մենք բոլորս էլ հաղթողներ ենք։

Այդ օրերին Տրապիզոնում, թուրքերի նախաձեռնությամբ, անդրկովկասյան և օսմանյան կառավարությունների միջև արդեն սկսվել էին հաշտության բանակցությունները։

«Հաստատելով» Անդրկովկասի և Թուրքիայի ժողովուրդների «ազգակցական» կապերը, որոնք բխում են նրանց ընդհանուր անցյալից, նույն կրոնից, Օսմանյան կայսրության պատվիրակության ղեկավար Ռաուֆ Բեյը Անդրկովկասի և Թուրքիայի ժողովուրդներին դիտում էր որպես արյունակիցներ և բախտակիցներ։ Անկախության անվան տակ օսմանյան պատվիրակությունը ամեն կերպ ձգտում էր Ռուսաստանից Անդրկովկասի անջատմանը, Թուրքիայի հետ սերտացմանը՝ քանզի Անդրկովկասը չի կարող իրեն պաշտպանել հյուսիսային հարևանից «մտահոգվածությամբ»։

1918 թ. ապրիլի 22-ին Անդրկովկասի Սեյմի կողմից երկրամասը անկախ հայտարարվելուց հետո, երկրամասի կառավարության հրահանգով առանց կրակոցի Թուրքիային հանձնվեց Կարսը։ Թուրքերը գրավեցին նաև Բաթումը։ Տրապիզոնում ընդհատված հաշտության բանակցությունները վերսկսվեցին Բաթումում։ Մայիսի 11-ին, բանակցությունների առաջին նիստում, Օսմանյան կայսրության պատվիրակության ղեկավար, արդարադատության նախարար Հալիլ բեյը մաղթեց, որպեսզի Թուրքիայի օգնությամբ «Կովկասի գեղեցիկ երկիրը ավելի շուտ ստանա երջանկության պայմաններ, որոնք պաշտպանեն նրա ժողովուրդների կյանքն ու ունեցվածքը և ապահովեն մարդու իրավունքները»։

Պալատներում հնչող քաղցրածոր խոսքերին զուգընթաց «Հանուն ալլահի և հանուն մարդասիրության» Թուրքիան շարժում էր իր զորքերը դեպի Արևելյան Հայաստան, դեպի պանթուրքիզմի երազանքների իրականացում։ «Ազատարար» Թուրքիայի դեմքը երևաց նույն օրը, մայիսի 11-ին ներկայացրած «Անկախության, բարեկամության, հավերժ խաղաղության» հաշտության պայմանագրի նախագծում։ Նախատեսվում էր հայկական նոր տարածքների նվաճում, «հայկական դավառ» վերադում, Ալեքսանդրապոլից մինչև Ջուլֆա երկաթուղին թուրքերին հանձնում, Հայաստանի տարածքով թուրքական զորքերի ազատ տեղափոխություն։ Դու հայերի հաշվին տարածքային

նոր թալան էր, թրքական անհաղ ախորժակի նոր դրսևորում, նոր կոտորածներ։

Մայիսի 15-ին խախտելով զինադադարը, թուրքերը հանկարծակի զրոհով գրավեցին Ալեքսանդրապոլը, որևցին նոր պահանջներ, այդ թվում և հայկական զորքի ու բնակչության հետքաշում երկաթգծի շրջակայքից 25 կմ լայնությամբ։ Իսկ դա նշանակում էր դաղթեցնել Շիրակի և Արարատյան դաշտավայրի գյուղերի ողջ բնակչությունը, նրանց մատնել նոր արհավիրքների։ «Թուրք քաղաքականության նպատակն է՝ մշտապես տիրապետել հայկական շրջաններին, բնաջնջել հայերին... Պոլսում իշխում է մի ծայրահեղ թշնամական ուղղություն հայերի հանդեպ»,—գրում էր Բաթումի բանակցություններում կերմանական պատվիրակության ղեկավար գեներալ ֆոն Լոսովը 1918 թ. մայիսի 23-ին։

Թուրք պատվիրակության հակահայկական ուղղվածությունը հայ պատվիրակները զգում էին ամեն քայլափոխում։ «Հայերը խոսակցություններ սկսում և վերջացնում է հնչակով ու դաշնակով։ Հայերը մեղավոր են խոսքերով»,—գրում էին Խատիսյանը և Քաջազնունին՝ Թիֆլիս, Հայոց Ազգային խորհրդին։ «Հայերը պարտված են, պետք է հպատակվեն»,—հայտարարում էին թուրք լիազորները։

Թուրքական 1-ին, 2-րդ, 6-րդ կորպուսներից կազմավորված «Կարս» զորամիավորման զորախմբերը Ալեքսանդրապոլը գրավելուց հետո հարձակման էին անցել չորս ուղղությամբ։ Առաջին զորախումբը, հարձակվելով Վորոնցովկայի (Տաշիր) ուղղությամբ՝ Ղարախաչի լեռնանցքով, ձգտում էր դուրս գալ Բոյնիս-Խաչեն—Բորչալու—Թիֆլիս։ Երկրորդ զորախումբը հարձակվում էր Ջաջուռ—Համամլու—Ղարաքիլիսա—Դիլիջան—Ղազախ—Ելիզավետպոլ ուղղությամբ։ Այստեղ նեավեցին նոր ուժեր արևմտյան ճակատից։ Դեպի Երևան երկու ուղղությամբ հարձակվում էին 3-րդ և 4-րդ զորախմբերը։ Մայիսի 21-ին թուրքերը, գրավելով Սարդարապատ կայարանը, մոտենում էին Երևանին։ Հայ ժողովուրդը այլևս նահանջելու տեղ չուներ։

Կազմավորման գործընթացում գտնվող Հայկական առանձին կորպուսի հրամանատարությունը թշնամուն գիմակայելու համար կատարեց ուժերի վերադասավորում։ Գեներալ Մովսես Սիլիկյանի հրամանով ստեղծվեցին Երևանյան և Սարդարապատի զորախմբերը, Արագածի ջոկատը։ Գնդապետ Դանիել Բեկ Փիրումյանի հրամանատարությամբ գործող Սարդարապատի զորամիավորումը մայիսի 22-ին հառձակման անցավ Քյոփալու (Արշալույս) և Ղուրդուղլի (Առմավիր) գյուղերի բնագծից և հուժկու գոհով ոչնչացրեց առաջ շարժված ուժերը Ղամշլու (Եղեգնաձոր) գյուղի շրջանում։ Ետ գերցվեց մեկ օր առաջ թշնամու գրաված Սարդարապատը։ Թուրքերը խուճապահար նահանջելով և կրելով մեծ կորուստներ, պաշտպանության անցան Արաքս կայարանի շրջանում։ Այդ մարտերում աչքի ընկան հիմնականում զարաբաղցիներից բաղկացած 5-րդ գնդի և կամավորական աշխարհազորային ջոկատների մարտիկները։ Ենոպետ Պողոս Բեկ Փիրումյանի հրամանատարությամբ, ենոպետ Պերեկրեստովի պարտիզանական, Ամիրխանյանի ղեկավարած Չելթունյան հեծյալ գնդերը։

Այդ հաղթանակը բարձրացրեց զորքի տրամադրությունը։ Հայրենիքը վերջնականապես փրկելու վտանգը համախմբեց ու ոտքի հանեց ողջ ժողովրդին։ Թե՛ բնակչության, թե՛ զինվորների սրտերում ու շուրթերին էին Երևանյան զորամիավորման հրամանատար գեներալ Մովսես Սիլիկյանի և Հայկական առանձին բանակային կորպուսի հրամանատար գեներալ Թովմաս Նազարբեկյանի՝ մայիսի 24-ին և 26-ին ժողովրդին ուղղված կոչերի սրտառուչ խոսքերը, Երևանի ազգային խորհրդի ղեկավար Առամ Մանուկյանի հրատոտ հորդորմունները, նրանց քաջալերում էր Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի վճռականությունը՝ չլքել Մայր տաճարը և ամբողջ Սուրբ Էջմիածինը։ «Հայտարարում ենք այս պահին կործանարար է, եթե մենք այժմ չկարողանանք ղենքը ձեռքին պաշտպանել մեր ազատությունն ու արժանա-

պատվություններ, ապա մենք արժանի չենք գոյատևելու իբրև ինքնուրույն ժողովուրդ, և բոլորիս մեր սերունդները անեծքով կհիշեն։ Մենք պետք է հույս ներս դնենք միայն մեր ուժերի վրա և եթե այժմ անհապաղ չօգնենք բանակին պարենամթերքով՝ կկործանվենք։ Հիշեցեք, այժմ կնվաճենք ապագան կամ այլևս չենք տեսնի այն, ո՛չ մենք, ո՛չ մեր սերունդները»,—ասված էր գեներալ Նազարբեկյանի կոչում։

Թուրքական զավթիչների դեմ անձնուրաց պայքարի դուրս եկան Հայկական առաջին կորպուսի մարտիկները՝ զինվորներն ու սպաները, ռուս կամավորները, կանայք ու աղջիկներ, ծերունիներ ու պատանիներ, բանվորներ ու գյուղացիներ, հոգևորականներ, մտավորականներ, եզդի կամավորներ։ Հայրենիքի պաշտպանությունը կրում էր համաժողովրդական բնույթ։ Դա իրական ժողովրդական պատերազմ էր, հայ ժողովրդի կենաց ու մահվան կռիվ, որը չէր ճանաչում ո՛չ քաղաքական համոզմունք, ո՛չ կուսակցականություն, ո՛չ դասակարգային հակամարտություն։ Հրետանային բրիգադի հրամանատար Խաչատուր Արարատյանը գրել է. «Երևանի շրջանում իշխանությունը ամուր գտնվում էր Արամ Մանուկյանի ձեռքերում, որը համերաշխ գործում էր ժողովրդին ու զորքին ղեկավարող գեներալ Սիլիկյանի և Դրոյի հետ։ Երևանի շրջանի ռազմական ու տնտեսական հզորության կազմակերպման նրանց ակնառու ունակությունը հայերին հնարավորություն տվեց զենքը ձեռքին պահել մի կտոր հողը, միակ քաղաք Երևանը և Սուրբ Էջմիածին վանքը։ Եվ եթե հայերիս հետ հաշվի էին նստում այն ժամանակ և հաշվի են նստում այժմ, ապա այդ ես վերագրում եմ բացառապես երեք անձանց՝ Արամին, գեներալ Սիլիկյանին, Դրոյին»։ «Արամը մեր պատմության այդ ծանր պայմաններում արդարացրեց իր վրա դրված հույսերը,—գրել է Ս. Վրացյանը,—նա կատարեց մեր պատմության այդ շրջանի ժողովրդական իմաստուն առաջնորդի ծանր պաշտոնը, հիմք գնելով Ազատ և Անկախ Հայաստանի»։

Ակտիվ գործողությունների անցավ գեներալ Սիլիկյանի ղեկավարած Երևանյան զորամիավորումը, որի կազմում էին 5-րդ, 7-րդ, 8-րդ, Վանի առաջին և երկրորդ գնդերը, Մակուի հետևակային գումարտակը, 2-րդ հեծյալ բրիգադի առաջին, գնդապետ Դոլուխանյանի հրամանատարությամբ գործող 6-րդ հրաձգային, գնդապետ Զալինյանի գլխավորած հեծյալ, գնդապետ Պերեկրեստովի պարտիզանական գումարտակը, փոխգնդապետ Կորոլկովի պարտիզանական հեծյալ դունդը։ Բաշ-Ապարանի շրջանում թուրքերին ջախջախիչ հարված հասցրեց փոխգնդապետ Կարապետ Հասանփաշյանի հրամանատարությամբ գործող Արագածի հարվածային ջոկատը։ Դրաստամատ Կանայանի զորախումբը մայիսի 24-ին մտավ Ալի Քուչակ՝ դեպի Բաշ-Ապարան շարժվող թուրքական 36-րդ դիվիզիային դիմակայելու համար։

Առաջ շարժվելով Կոշ և Խղնաուզ (Արագած) գյուղերով, Շամիրամի ձորով, հայկական զինված ուժերը գրավեցին Արաքո կայարանը։ Արագածի ջոկատը Սարդարապատից օգնության հասած զորամասերի հետ հետապնդեց թշնամուն և գրավեց Մաստարա, Ներքին և Վերին Թալին բնակավայրերը։ Առջևում Ալեքսանդրապոլն ու Կարսն էին։ Այդ մարտերում ցուցաբերած սքիրանքների համար Պողոս Բեկ Փիրումյանի 5-րդ գնդի 42 սպա և 160 զինվոր արժանացան պարգևների։

Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Արագածի ջոկատների հաջողությունները ոգեշնչեցին Ղարաքիլիսայում և Դիլիջանում գտնվող հայկական զորքերին, որոնց միացան հազարավոր աշխարհազորայիններ։ Արամ Մանուկյանը հեռագրեց գեներալ Սիլիկյանին. «Ուրախ եմ հաղորդել, որ Ձեզ վստահված բանակի հաղթանակը Սարդարապատում կենսարար ազդեցություն ունեցավ մեր ժողովրդի վրա։ Ոտքի են ելել ոչ միայն Երևանի նահանգը, այլև Ղազախն ու Դիլիջանը։ Հենց նոր հաղորդեցին, թե ինչպես մեր զինվորականների, այնպես էլ տեղացի ժողովրդի ու գաղթականների տրամադրություններն անմիջապես փոխվեցին։ Բոլորը զենքը ձեռքին շտապում են Ղա-

բաքիլիսա, այնտեղից՝ առաջ։ Ջոկատները գնում են երկար ժամանակվա համար վերցված իրենց պարենով։ Ոգևորությունն աննախադեպ է»։

Այդ ժամանակ Ղարաքիլիսայի ճակատ էին նետվել թուրքական մեծաքանակ ուժեր՝ առաջին և երկրորդ կորպուսների երեք դիվիզիաներ՝ Կարաբեքիրի հրամանատարությամբ։ Մայիսի 20-ին թուրքական մեկ գումարտակ գրավել էր Ջաջուր, դուրս եկել Ղայթախչի, Աղբուլաղ, շարժվել դեպի Համամլու, այնտեղից Արչուտ։ Թուրքական առաջապահ զորախումբը մայիսի 21-ին դուրս էր եկել Վորոնցովկայի և Ջալալօղլու (Ստեփանավան) շրջան։ Այստեղ մայիսի 21—23-ը թեժ մարտեր տվեց Անդրանիկի զորաջոկատը, որը գեներալ Նազարբեկյանի հրամանով պետք է պաշտպաներ Ալեքսանդրապոլ—Թիֆլիս երկաթգիծը՝ Սանահինի շրջանում։

Ղարաքիլիսայում կենտրոնացած 1-ին հեծյալ և Կարսի գնդերից, կամավորական ջոկատներից ընդամենը 2000 սրով և Դիլիջանից առաջինը Ղարաքիլիսա շարժված շտաբս կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանի 4 հրանոթից բաղկացած մարտկոցից կազմավորվեց հավաքական հեծյալ ջոկատ՝ գնդապետ Նիկոլայ Ղորղանյանի հրամանատարությամբ։ Ջոկատը մտավ գնդապետ Ալեքսանդր Բեյ-Մամիկոնյանի գլխավորած Ղարաքիլիսայի խումբ-բավորման մեջ։ Խմբավորման կազմում էին Հայկական կորպուսի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ գնդերը, որոնք դեռ գումարտակներից վաշտերի չվերածված, դուրս եկան հակառակորդի՝ մարտերում կոփված բանակի դեմ։

Գնդապետ Ղորղանյանի ջոկատը մայիսի 24-ին առաջ շարժվեց և դիրքեր գրավեց Արչուտ—Սարալ—Ղուրսալ տեղամասում։ Շտաբը, որի պետն էր Եղիազարյանը, կենտրոնացավ Դարբաս գյուղում։ Պորուչիկ Գարեգին Նժդեհը իր 40 հեծյալներով Դարբասից աջ՝ լեռներում մայիսի 25-ին հայտնաբերեց և կանգնեցրեց առաջ շարժվող մոտ 100 թուրք հեծյալների։ Կանգնեցվեցին և հետևակի մեծ ուժեր։ Թեժ մարտերում թշնամին մեծ կորուստներ կրելով նահանջեց։

Մարտերում հատկապես աչքի ընկան շտաբս կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանի հրետանավորները, որոնք թուրքերին գնդակոծում էին բայց դիրքերից։ Զինամթերքի սպառվելուց հետո, կեսօրվա ընթացքում արձակվել էր 2000 արկ, հրետանավորները զինված սրերով ու հրացաններով, անցան գրոհի, կանգնեցրին թշնամու առաջխաղացումը։ Մարտերում զոհվեցին քաջարի հրամանատար Գուրգեն Տեր-Մովսիսյանը և 25 զինվոր։

Ակնառու էին գնդապետ Վլադիմիրովի դիվիզիոնի հրետանավորների, երկու հեծյալ էսկադրոնների, էբզրումյան երկու վաշտերի զինվորների սխրանքն ու խիզախությունը, 2-րդ հավաքական մարտկոցի հրամանատար, շտաբս կապիտան, հետագայում գեներալ-լեյտենանտ, խորհրդային Միության հերոս Հովհաննես Վեքիլյանի՝ մարաերը գերազանց վարելու ունակությունը։ Հետևակը, հրետանին, հեծելազորը մի քանի անգամ հետ մղեցին հակառակորդի գերազանց ուժերի հակագրոհները, մայիսի 27-ին Արչուտի և Սարալի շրջանում անցան հարձակման և նրան սեղմեցին Արագածի փեշերին։

Ղշլաղի և Դարպասի տակ բռնկված կատաղի մարտում չհասնելով առավելության, թուրքական զորամասերը հայկական զորքի ձախ թևում խոր շրջապտույտ անելով, մայիսի 28-ին դուրս եկան Վարդանլու։ Հարձակվող թուրքական զորքերին միացան և Ղարաքիլիսայում գտնվող նրանց բանակի 3000 ռազմադերիներ։ Մայիսի 30-ին, երբ վերջացել էին հայ մարտիկների զինամթերքն ու արկերը, թուրքերը մտան Ղարաքիլիսա։

Ըստ թուրքական տվյալների, Ղարաքիլիսայի տակ հերոսաբար կռվող հայերը հարձակվող թուրքական 10 հազարանոց բանակի դեմ ունեցել են ընդամենը 7 հազար զինվոր, 10 հրանոթ, 20 գնդացիր։ Թուրքերն ունեցել են 70 հրանոթ, 40 գնդացիր։ Առաջին երկու օրերը հայերը հետ են մղել թուրքերի բոլոր գրոհները, իրենք են անցել հակահարձակման, միայն փամփուշտների ու արկերի վերջանալն է նրանց ստիպել նահանջել։

Հայերի դրսևորած հերոսությունը զգացվեց և Բաթումում։ Հայ պատվիրակներին մայիսի 27-ին «բարեկամական զրույցի» հրավիրած թուրք քաղաքագետներն ու բարձր հրամանատարները արդեն խոսում էին ավելի զուսպ։ Հալիլը խնդրեց հաղորդել Հայոց Ազգային խորհրդին, որին մինչ այդ նա չէր ուզում ճանաչել, որ թուրքերը դեմ չեն «Հայաստան կազմակերպելուն Կովկասի այն վայրերում, որոնք իրենց կողմից գրավված չեն»։ Մինչ այդ Բաթումում խոսվում էր միայն Վրաստանի և Ադրբեջանի անկախության և նրանց ու թուրքերի միջև Հայաստանի տարածքների բաժանման մասին։

Թուրքական քաղաքականության շրջադարձի պատճառը պարզ է դառնում Հալիլ, Վեհիբ, Շևքեթ, Կարաբեքիր փաշաների կցկտուր խոստովանանքներից՝ կապված Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի մայիսյան հերոսամարտերի հետ։ Ղարաքիլիսայի կռիվները համարելով հաղվագեպ Առաջին աշխարհամարտի թուրքական ճակատում և շեշտելով, որ «Ղարաքիլիսայի տակ հայերը ցույց տվեցին, որ կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները», Շևքեթ և Վեհիբ փաշաները չեն թաքցրել, որ այդ մարտերը «դիմադրական թափի, քաջության և արիության» շնորհիվ «ներշնչել են հարգանք» հայերի նկատմամբ։ Այդ մարտերից հետո Վեհիբ փաշան հեռացվեց Կովկասյան ճակատի թուրքական զորքերի գլխավոր հրամանատարի պաշտոնից։

Այսպիսով, հայկական հարցում «օսմանյան պատմության դարձակետի» պատճառը հայ ժողովրդի մայիսյան հերոսամարտերն էին։ Սարդարապատը, Բաշ-Ապարանը, Ղարաքիլիսան հայ ժողովրդի աննկուն կամքի, հերոսական ոգու, իր անկախության համար միշտ վերջ միահամուռ՝ ազգովին պայքարելու պատրաստակամության և վճռականության, համախմբվածության վկաներ եղան։ Հաղթանակը հայոց պետականության վերականգնման, Հայաստանի Հանրապետության հռչակման նախադրյալներ ստեղծեց։ Հայոց Ազգային խորհրդում ծավալված բուռն քննարկումները մայիսի 28-ին ավարտվեցին Հայոց գավառներում Ազգային խորհրդի «միակ և գերագույն իշխանության» հռչակումով, «քաղաքական, վարչական ղեկը վարելու» իրավունքի վերապահումով։ Բաթումում պայմանագիրն ստորագրվեց Անկախ Հայաստանի անունից։

Ժողովրդի հաղթանակը ստիպեց թուրքերին հաշվի նստել հայերի հետ, ճանաչել ծնունդ առնող Հայաստանի Հանրապետությունը։ Հայ ժողովուրդը ապացուցեց, որ կարող է նաև հերոսական, հաղթական կռիվներ մղել։

Այդ ժամանակ թուրքական զորքը կանգնած էր Երևանից 7 կիլոմետր հեռավորության վրա, Կարաբեքիր փաշայի կորպուսը հրաման էր ստացել կենտրոնանալ Երևանը ե էջմիածինը գրավելու համար։ Կեղծելով փաստերը և իրողությունը Կարաբեքիր փաշան գրում էր. «Հետևելով հայ ազգի նկատմամբ ցուցաբերած թուրքական ավանդույթներին, ես հրամայեցի կանգնեցնել գործողությունները, չնայած նրան, որ նրա հիմնական ուժերը ջախջախված էին»։ Թուրք գեներալը շատ լավ գիտեր, որ Երևանից յոթ կիլոմետր հեռավորության վրա զորքերի կանգնեցնելը ոչ թե թուրքերի «հայասիրության» հետևանք էր, այլ Բաքուն ժամ առաջ գրավելու տենչ, ուր ձգտում էր և Գերմանիան։ Երևանը թուրքերը արդեն համարում էին իրենցը։

Կարաբեքիրը լավ գիտեր նաև, որ թուրքական զորքերի առաջշարժումը հայ ժողովրդի համատարած զոհերի, կրած տանջանքների մի մռայլ պատմություն է։ Թուրք զինվորների քաջությունը չափվում էր սպանված անմեղ երեխաների, բռնաբարված կանանց, գնդակահարված պատանիների, խոշտանգված ծերունիների քանակով։

Կարսի մարզում, Երևանի, Թիֆլիսի, Ելիզավետպոլի և Բաքվի նահանգներում 1918 թ. գարնանը և ամռանը ոչ լրիվ տվյալներով ոչնչացվել և թալանվել էր 370 հայկական գյուղ, տուժել 62696 ընտանիք։ Գաղթականների թիվը հասել էր կես միլիոնի։ Միայն Կարսի 117 հայկական գյուղերից Անդրկովկաս և Հյուսիսային Կովկաս փախան 13206 ընտանիք։ Ախալքալաքի

գավառում տուժեց 67 գյուղ, 8967 ընտանիք, Երևանի նահանգում՝ 116 գյուղ, 32960 ընտանիք։ Ղազախի, Նուխիի, Արեշի, Շուշվա, Ջիվանշիրի, Շամախի, Գյոքչայի գավառներում ավերվեց 102 հայկական գյուղ, ոչնչացվեց 13150 ընտանիք։ 42 գյուղ ավերվեց Լոռի-Փամբակի գավառում։

Ժխտելով թուրքական դիվանագետների և քաղաքագետների թմբկահարումը, թե իբր օսմանցիներն են հայերին տվել Հայաստանի Հանրապետությունը, Համո Օհանջանյանը 1920 թ. ապրիլի 20-ին Անդրկովկասյան հանրապետությունների կառավարությունների լիազոր-ներկայացուցիչների ժողովում ասել է. «Իր անկախությունը պաշտպանելու պատրաստակամությունը հայ ժողովուրդն արդեն ապացուցել է Սարիղամիշի, Ղարաքիլիսայի, Սարդարապատի և այլ տեղերի տակ մղված մարտերում։ Հայաստանի հաղթավոր դավակներ ընկան հայ ժողովրդի ազատության դարավոր թշնամու դեմ անկախության համար պայքարում, և իր այդ զոհերով ստեղծվեց անկախ և ինքնիշխան Հայաստանի Հանրապետությունը»։

Հայկական պետականության վերականգնումը՝ Առաջին Հանրապետության ստեղծումը, 1918 թ. հայ ժողովրդի մեծ հաղթանակն էր նրա բազմադարյան պատմության մեջ։